

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ



րիգոր Նարեկացուն Մ. Աբեղ-
յանն իր «Գրականության
պատմության» մեջ 57 էջ է
նվիրել (511—568), ավելի
քան որևէ ուրիշ հեղինակի. այդ էջերի մե-
ծագույն մասը նա հատկացրել է Նարեկին,
իսկ փոքր մասը Նարեկացու տաղերին և
մյուս գրվածքներին: Մ. Աբեղյանը Նարե-
կացուն կոչում է «Մեր առաջին մեծ բանա-
ստեղծը» (էջ 518), նրա գրվածքը՝ «...մեր
բանաստեղծության առաջին մեծ հրաշակե-
րությունը լինելով՝ ոչ միայն հրաշալիք է
երևացել մեր ժողովրդի աչքին, այլ և մի
սրբություն հրաշագործ զորություն» (էջ
559): Այսպիսի բարձր գնահատության հա-
մապատասխան է և Մ. Աբեղյանի գրածը
նրա մասին, որ ինքն ևս յուր հերթին բա-
նաստեղծական է: Ունի գեղեցիկ տեղեր
և նկարագրություններ. օրինակ այն միջա-
վայրը, որի մեջ սնվել ու մեծացել է Գրիգո-
րը, սրա ժամանակ երևան եկած վերածնու-
թյան շունչը, ընդարձակ քաղվածքներ Նա-
րեկից ու տաղերից և նրանց բացատրու-
թյունը, միասփյուռված, որը կատարյալ ար-
տահայտություն է գուր Նարեկացու մոտ,
մեղքերից փրկվելու տիրապետող տենչը
Նարեկում և այլն: Սրանց հետ միասին կան
շատ թերի տեղեր. հատկապես բացակայում
է Նարեկի բուն, հիմնական նպատակը, այն-
պես որ ամեն մի գլուխ դիտվում է իբրև
առանձին ստեղծագործություն, իրար հետ
կապ չունեցող:

Այս թերի կողմերը առանձին առանձին
մեջ բերելը նպատակահարմար չէր լինի,
որովհետև կդառնար կցկտուր և չէր տա մի
ամփոփ պատկեր Նարեկի էության և հորին-
վածքի մասին: Ուստի ես՝ որոշեցի Նարեկի
նպատակն ամբողջապես պատկերացնելու
համար անկախորեն գրել Նարեկի մասին
շատ համառոտ կերպով, այնպես, ինչպես

ինքս եմ հասկանում: Իմ դրածը պետք է
նկատել ոչ իբրև հերքում Մ. Աբեղյանի
գրածի, այլ իբրև լրացումն նրա գրածի:
Երկու գրվածքները միասին կնպաստեն
Նարեկին ավելի լավ հասկանալուն, թեպետ
պետք է ասել, որ Նարեկն արժանի է շատ
ավելի ընդարձակ ու մանրամասն ուսում-
նասիրության:

Ի՞նչ է Նարեկը. — Տասնամեկերորդ դարի
բուն սկզբին, 1002 կամ 1003 թվին, մեր
հին գրականությունը հարստացավ մի նշա-
նավոր ստեղծագործությամբ, որին վիճակ-
ված էր անմահ մնալ և անմահացնել յուր
հեղինակին: Խոսքս վերաբերում է Նարեկա-
վանքի վանական Գրիգոր Նարեկացու «Մա-
տեան ողբերգության» գրվածքին, որ հայ
ժողովուրդը սովոր է անվանել Նարեկ:

Այս գրվածքը իր նմանը չունեցող հաջո-
ղություն ու ծավալում ստացավ: Մի կողմ
թողած նրա բազմաթիվ ձեռագիրները, որոնք
գտնվում են Պետական Մատենադարանում
և ուրիշ տեղեր, բավականանում եմ ասելով,
թե նա մինչև այսօր 51 անգամ տպագրվել
է զանազան տեղեր. մի ժողովրդականու-
թյուն, որին չէ հասել ոչ մի ուրիշ գրվածք,
և ոչ նույնիսկ Նղիշեն, որն ունեցել է միայն
28 տպագրություն: Երեք անգամ Նարեկը
թարգմանվել է աշխարհաբար և մի ան-
գամ արաբերեն. ունեցել է երեք հեղինակ-
ների մեկնություններ. — հին մեկնություն,
Նալյան պատրիարքի և վերջինը ու լավա-
դույնը՝ Հ. Ավետիսյանի, որն երեք անգամ
տպագրվել է: Այս արտակարգ ժողովրդա-
կանության պատճառն այն է, որ հայ ժողո-
վուրդը Նարեկը ճանաչել է համապատիվ Մ.
Գրքի. ամեն մի հավատացյալ ընտանիք
պարտք է համարել այս գրքից մի օրինակ
ունենալ, որի մեջ նա արձանագրում էր ըն-
տանեկան կարևոր դեպքերը — ծնունդ, մահ,
ամուսնություն և այլն: (Այստեղից էլ ժո-

դովորական առած է դարձել «կարծես նարեկի կողքին է գրված»)։ Մյուս կողմից նա ծառայում էր որպես բժշկության միջոց-ծանր հիվանդների համար հրավիրված գրա-գետ մարդը կարգում էր հիվանդների բժշկությանը նվիրված մի քանի գլուխ։ Գրքի հեղինակը՝ Գրիգոր Նարեկացին, իր կենդանության ժամանակ դեռ, ճանաչված էր որպես սուրբ մարդ և ժողովուրդը հա-վատում էր, որ նրա՝ այս կամ այն հիվան-դությունը բուժելու համար Աստուծուն ուղ-ղած աղոթքը ընդունելի պիտի լիներ Աս-տուծուն ու հիվանդը պետք է ապաքինվեր։ Այս սուրբ գիրքը ճանաչված էր նաև իբրև հզոր հալածիչ դիվական ցնորքների ու սա-տանաների, որոնք թշնամի են մարդուն, և նպատակ ունեն նրան մոլորեցնելու։ Հատ-կապես այս նպատակով գրված է առանձին մի գլուխ, որի վերնագիրն է «Մաղթանք զօրատուք արհաւրաց գիշերայնոց» հռչակա-վոր «ընկալ քաղցրութեամբ» աղոթքը։ Այս աղոթքը բարեպաշտների հավատով ապահո-վում էր քնած մարդկանց գիշերային հան-գիստը ամենատեսակ արհամիտքներից, ու-տի ամեն գիշեր քնելուց առաջ ասում էին այն։

Գրքի հաջողության մյուս պատճառները նրա ներքին ու արտաքին հատկություններն են կազմում։ — խորը բարեպաշտությունը, կրոնական անկեղծ հավատը, մարդու մեղա-վորությունը և Նարեկի ոճի անիմանալի խրթինությունը։ Ըստ հին ժամանակի ճա-շակի՝ որքան խրթին, դժվարահասկանալի լինի խոսքը, այնքան ավելի խորամիտ ու հետաքրքրական է դառնում։ Մինչդեռ մենք գրում ենք այնպես, որ ոչ միայն մեր ամեն մի խոսքը պարզ ու հասկանալի լինի, այլ և անհասկանալի չդառնա երբեք, հենքի կարծիքով, ընդհակառակը, պահանջվում էր գրել այնպես, որ խոսքը դժվարահասկանա-լի, նույնիսկ անհասկանալի դառնա։ Այս տեսակետից մեր հին մատենագրության մեջ առաջին տեղն է բռնում Նարեկը, և այնու-հետև Գրիգոր Մագիստրոսի թղթերը։

Այս պատճառներով մեր հին ու նոր բա-նասիրության կողմից Նարեկն արժանացել է ամենաբարձր գովաստանքի և ներբողների։ Նրա մի քանի գլուխները նույնիսկ արժա-նացել են մինչև իսկ պատարագամատուցի մեջ մուծվելու, իբրև պատարագի խորհրդի մաս։ Նարեկի վերջին մեկնիչը՝ 2. Ավետիք-յանը նրան համեմատում է Մովսես մարգա-րի, Կովիթ մարգարեի, Գրիգոր Լուսավորչի հետ։ Նա գրում է, որ օտարները չպարծե-նան Հոմերոսով, Օվիդիոսով, Վիրգիլիոսով,

քանի որ գոյություն ունի Գրիգոր Նարեկա-ցին։ Նարեկի թարգմանիչներից մեկը՝ Թոր-գոմ եպիսկոպոսը Նարեկացուն կոչում է «մեր հպարտութեն, մի հանճար ոչ միայն մեր վոթը ազգի համար, այլ և իբրև միջազգային միատիկական գրա-կանութեան ամենէն սրտագրաւ ու մեծար-ժէք դէմքերէն մէկը»։ Նույնպիսի գրվա-տանքներ են նվիրում Նարեկացուն Դ. Ալի-շանը (Հայապատում, էջ 87—88), Օրման-յանը (Ազգապատում, Ա 1180—81), Մ. Ա-բեղյանը (Հայոց հին գրականության պատ-մություն, էջ 518—559), և ուրիշները։ Թերևս ավելորդ չլինի իմ կողմից ևս երկու համե-մատություն մեջ բերելը։ Նարեկացուն իսկ և իսկ ժամանակակից էր պարսից մեծագույն բանաստեղծ Ֆիրդուսին, իր համբավվոր Շահնամե-ով, իսկ նրանից մոտ երկու դար հետո հանդես եկավ մեր մյուս հարևանի՝ Վրաստանի մեծագույն բանաստեղծ Շոթա Ռուսթավելին իր հռչակավոր Ընձնավորով։ Սրանց կողքին կանգնած է և մեր մեծագույն բանաստեղծ Գրիգոր Նարեկացին։ Սակայն Ֆիրդուսին բանաստեղծական հանճարով գրի է առել պարսից հին պատմական ա-ռասպելները, որոնցից շատերը, դեռ ավելի վաղ, գրի էին առնված ուրիշ բանաստեղծ-ների կողմից։ Իսկ Շոթան վրացերեն հոյա-կապ բանաստեղծական լեզվով արտահայ-տել է պարսկական մի արձակ գրվածք։ Այն ինչ Գրիգոր Նարեկացու մատչյալը մի-անգամայն ինքնուրույն բանաստեղծություն է, իսկ նրա մտահղացումը, ներքին իդեան բոլորովին նոր է ու միակն է աշխարհի գրականության մեջ։

Ո՞վ էր Գրիգոր Նարեկացին. — Գրիգորն Անձևացյաց խոսքով եպիսկոպոսի երեք որդիներից կրտսերն էր։ Նրա հայրը կնոջ վաղաժամ մահից հետո կուսակրոն քահա-նա դարձավ և ապա Անձևացյաց դավառի եպիսկոպոս։ Նա պարագլու էր գրակա-նությանը և թողել է երկու շատ ընտիր գրվածքներ։ — Մեկնություն ժամագրոց և Մեկնություն պատարագի, որոնք մինչև այսօր էլ հարգի են։ Մանկության հասակից Գրիգորը աշակերտեց գիտնական Անանիա վարդապետին, որը յուր քեռին էր և հիմնել էր Նարեկա վանքը համանուն գյուղում՝ Վա-նա ծովի հարավում, հանդիսանալով նրա առաջնորդն ու վանահայրը։ Նրա խնամքի տակ Գրիգորը սովորեց գրագիտություն ու ուսում ստացավ. ուսման գլխավոր առար-կան այն ժամանակ Ս. Գիրքն էր ու ամենից առաջ սաղմոսը։ Նա ծանոթացավ նաև եկե-ղեցական հայրերի մեկնաբանություններին,

այնպէս որ լիովին հմտացաւ Ս. Գրքի գիտութեանը և նրա միտքն ու ուշադրութեանը կլանված էին Ս. Գրքի անցքերով ու պատկերներով: Ինչպէս Անանիա վարդապետի մոտ, այնպէս էլ տանը, իր հօր ու եղբայրների մոտ Գրիգորը շրջապատված էր ինտելիգենտ գրական շրջանով, որն ավելի ևս ազդեց նրա կրոնա-բարոյական վարքի ու տրամադրութեան վրա: Հայտնի չէ, թե քանի տարեկան հասակում նա մտաւ Նարեկի վանքը, ե՞րբ ձեռնադրվեց կուսակրոն քահանա և ե՞րբ շնորհիւ յուր լայն հմտութեան նշանակվեց «պետ վարժից», այսինքն վարժապետ: Նա ծնվել է 940-ական թվականներին և վախճանվել մոտավորապես 1010 թվին:

Շարունակ անձնատուր լինելով կրոնական խոհերի, աշխարհային կյանքը դիտելով որպէս վաղանցով ու ունայն և հանդերձալ հավիտենական կյանքի մասին երազելով, նա միտք հղացաւ այս երկու կյանքի մասին մի բանաստեղծական գրքոված հորինել. նրա վանական ընկերները խնդրեցին, որպէսզի իր մտադրութեան իրադրոծն: Եվ նա գրեց յուր հռչակավոր «Մատեան ողբերգութեան»-ը, պսակը մեր դրականութեան: Մատյանը ողբերգական կոչելով, նա ողբերգութեան բառը հասկանում էր բառացի, իբրև ողբերի երգ կամ երգված ողբ: Բայց այս բառն իր այժմյան նշանակությամբ, իբրև դրամա, նույնպէս շատ հարմարում է գրքին, ինչպէս հետո կտեսնենք: Գրքը բաղկացած է 95 գլխից կամ բանից (այսինքն բանաստեղծութիւնից): Առաջին բանի վերնագիրն է «Ե խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ». բոլոր հաջորդ բաները կրում են «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի առ նոյն աղերս մաղթանաց բանի. Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» վերնագիրը: «Նորին հսկողի» նշանակում է նույն Գրիգորի, որովհետև հոնարեն Գրիգոր բառը հայերեն նշանակում է արթուն, հսկող: Ուրեմն վերնագիրը նշանակում է. — Նոր հաղթված կրկին հեծութեան նույն Գրիգորի աղերսական մաղթանքների վրա. սրտի խորքերից խօսք Աստծու հետ: Գրքին ունի խոշոր առանձնահատկություններ՝ արտաքին և ներքին. ընդհանրապես ոճը, լեզուն արվեստական են, շատ խրթին, մոգ, երկարաբան, կրկնաբան, ներդաշնակ, ավելի շափավոր խոսքի նման քան արձակի:

Նաեւելի խրթնութիւնները. — Այս խրթնութիւններն արտահայտվում են զանազան կերպով: Ունի բառերի շափազանց կուտա-

գում, կրկնութիւններ, շափազանցութիւններ: Բառերի առատութեան արվեստական լեզվի մի հատկութիւնն է, որ նպատակ ունի ղեկավար հասկանալի դարձնել հեղինակի միտքը. կրկնութիւնները, նույնաբանութիւնները սահման չունին. մարդկային մեղքերը բերված են այնպիսի առատութեամբ, որ կարգացող մարդը հուսահատվում է. Աստծուն վերագրված է ավելի քան հազար տեսակ հատկութիւն, և այսպէս է գրեթե ամբողջ գիրքը:

Բառերի հեղեղը, շափազանց առատութեանը նմանում են մի վայրագ հեղեղի, որ բարձունքից սահելով անզուսպ կերպով թշում, տանում է յուր առջև եղած ամեն բան: Այս կողմից Նարեկացին տրամագծորեն հակապատկերն է Ներսէս Շնորհալու, որի հեղիկ, գողտրիկ ոճը շոյում է կարգացողի լսելիքը: Շնորհալին նմանում է մի անբիծ կույսի, իսկ Նարեկացին մի ահաբեկ ածգահայի: Չափազանցութեանը Գրիգորի հատկանիշն է. բառերի տարափի սաստկութեանից շատ անգամ կորչում է խոսքի բուն իմաստը:

Ոճի մյուս հատկութեանը կազմում են ակնարկութիւնները: Գրիգորն ինքը լիացած լինելով Ս. Գրքով, այնպէս է կարծում, թե կարգացողներն էլ իրեն պէս պետք է ծանոթ լինեն Ս. Գրքին, ուստի անդադար օգտվում է Ս. Գրքի որեւէ խոսքի կամ անձի հիշատակությամբ, նույնիսկ մի հարևանցի ակնարկով: Իբրև օրինակ բերենք մի հատված Ա. բանից. «Նւ երբ ես քեզ հետ դատեմ մտնում, ո՞վ հօր, աղերսաւիառն դատի, թող նա քեզ տաղտկալի շիտի, ինչպէս ամբարիշտ Յակոբի (Իսրայէլացոց) ձեռների համբարձումը. ինչպէս բողոքում է նային, կամ Բաբելոնի անիրաւութիւնը, որի վրա ակնարկում է 72-րդ սաղմոսը, այլ թող նա հաճելի լինի. ինչպէս բուրդ խոնկը Սելովայ խորանում, որը Դաւիթը կանգնեցրեց գերութիւնից դարձած տապանակի հանգըստեան համար, որ օրինակ է իմ կորած հոգու վերստին գիւտի»: Ահա մի կծիկ ակնարկութիւնների Ս. Գրքի վերա. — Հակոբի կամ Իսրայէլացոց ձեռների համբարձման տաղտկալիութեանը, Եսայու մարգարեութեանը, Բաբելոնի անիրաւութեանը, 72-րդ սաղմոսի ակնարկութիւնը, Սելովայ խորանը, գերութեանից դարձած տապանակը: Եթե ընթերցողները ծանոթ չլինեն այս հարցերին, գրվածքի միտքը նրանց համար անհասկանալի կմնա: Այդպիսի ակնարկութիւններով լի է ամբողջ Նարեկը. նրան

հասկանալու համար անհրաժեշտ է շատ
լավ ծանոթ լինել Ս. Գրքին:

Նարեկի ոճի մյուս հատկությունն է
այլաբանությունը և առեղծվածները: Նա
խորշում է առարկան իր սեփական անունով
կոչելուց, այլ արտահայտում է այլաբանու-
թյան, նմանությունների միջոցով, ինչպես
մի ժամանակ սովորություն էր դարձել նաև
եվրոպայում՝ մի քանի հեղինակների մոտ:
Օրինակ փոխանակ ասելու «խոսք», ասում
է «զմիջնորդ ազգման երկակի շրթանցս»
(բան ժԲ), փոխանակ ասելու «լեզու», ասում
է «փառաբանարան լեզուփա» (ԺԷ), փոխանակ
ասելու «այուն», ասում է «բարձրութեան
վստահարան (ԻԴ), փոխանակ ասելու «գլխի
մազ» ասում է «զտերև ոստոց դագաթան»
(ԼԳ), փոխանակ ասելու «ախանջ», ասում է
«լսելնաց դրոնք», «աչք» ասելու փոխարեն
ասում է «ճրագարան տեսութեանց երկրի»:
Երկրային կյանքը կոչում է «հովիտ վշտաց
հեծութեան», «ոտք» բառի փոխարեն ասում
է «հաստարան բարձրութեան շինուածոյ
մարմնոյ» և այլն: Նույն նպատակով գործ
է ածում և բավական առեղծվածներ. փո-
խանակ ասելու «ի» գիրը, նա ասում է «ան-
հատական թիւ խորհրդական երկեակ տա-
նեկի» (այսինքն խորհրդական ձայնավոր
գիրը, որ նշանակում է քսան, որովհետև
«ի» թիվը նշանակում է 20 (բան ԻԶ): Նշա-
նավոր է մանավանդ թվական առեղծվածը
ԻԹ բանում, որի մեկնություն համար գուր
են աշխատել մեկնիչները: Այնտեղ գրված է.
«Բանդի իննուց յրանից և թուոց երից և
չորեակ տասանց ի վաղորդայն է տունջեանն
առ մուտս արևուտ անդուտս առ նմին յալտ
կարկառամբ...»: Մի քանի մեկնություններ
են տվել այս առեղծվածին, բայց անհաջող:
Ոմանք կարծել են, թե իննուց յրանից նշա-
նակում է $9 \times 50 = 450$, չորեակ տասանց
նշանակում է $4 \times 10 = 40$, գումարը՝ 490:
Որովհետև այս թիվը արտագրյալն է
 70×7 , ուստի կարծել են, թե Նարեկացին
այս առեղծվածով հիշեցնում է Քրիստոսի
պատվերը, թե պետք է ընկերոջը ներել
 70×7 անգամ: Բայց այս մեկնությունը
սխալ է, որովհետև նախ՝ այստեղ խոսքը
ներման մասին չէ, և երկրորդ՝ այստեղ բաց
են թողնված «թուոց երից» բառերը: Մեկ-
նիչներից ոմանք կարծել են, թե դրանք ա-
վելորդ, միջանկյալ բառեր են, իսկ ուրիշ-
ները կարդում են 3—4, ինչպես որ ասում
ենք 5—6 մարդ, 10—15 հոգի, որ նույնպես
անթույլատրելի է, երբ տրվում են որոշ թվեր
մի բան հիշող հասկանալու համար: Սա-
կայն առեղծվածը բացատրվում է բոլորովին

ուրիշ կերպով. $9 \times 50 = 450$, թուոց երից
հավասար է 3 միավոր, չորեակ տասանց՝ 40,
ուրեմն ընդամենը 493: Այս թիվը պետք է
անջատել 4 մասի. 400, 70, 20, 3: Եվ այս
թվերը վերածել տառերի հայկական հին
թվանշաններով. այսինքն $400 = \text{ն}$, $70 = \text{հ}$,
 $20 = \text{ի}$, $3 = \text{գ}$. և հ ի գ կամ տառերը ուրիշ
կերպ դասավորելով կստանանք «հինգ» բա-
ռը: Ամբողջ բանի նշանակությունն էլ հենց
այս է. բանի սկզբում Նարեկացին ասում
է. «...զողջոյն օրն թողութեան ցուցեր փրկա-
րան», այսինքն ամբողջ օրը մեկ ցույց
տվի իբրև թողության փրկարան, որով հի-
շեցնում է Քրիստոսի պատվերը՝ «Յամենայն
ժամ աղօթս արարէք», իսկ վերջը պարզա-
պես ասում է, վաղ առավոտից մինչև երե-
կոյան արևամուտը, ձեռների կարկառումով:
Ամբողջ առեղծվածն արտահայտում է ա-
ղոթքի հինգ ժամեր՝ լուսարացից մինչև
արևամուտը. ուրեմն ամբողջ խոսքը նշանա-
կում է, թե մեկ պատվիրելիք օրական հինգ
անգամ աղոթք անել, և այդ հինգ աղոթք-
ներն են ըստ ժամագրքի. — Առավոտյան,
Արևադալի, Երրորդ, Վեցերորդ և Իններորդ
ժամերը, որոնցից առաջ և հետո եկող ժա-
մերը, այսինքն Գիշերային, Երեկոյան, Խա-
ղաղական և Հանգստյան չեն վերաբերում
օրվա ցերեկային ժամերին: Այս մեկնու-
թյունն իմն է՝ որ տպված է վիեննայի «Յու-
շարձան»-ում (էջ 223-224): Ուրեմն Նարե-
կացին փոխանակ ասելու հինգ աղոթքի
ժամեր, դիմում է այսպիսի խրթին առեղծ-
վածի:

Նարեկի արտաքին հատկություններին է
վերաբերում նաև հեղադաճակությունը, որի
վրա հեղինակը շատ մեծ ուշադրություն է
դարձրել: Հմուտ կարդացողին այնպես է
թվում, թե կարծես անորոշելի կրաժշտու-
թյուն է լսում: Նրա գրվածքի գրեթե կեսը
չափավոր խոսք է, հնգոտնյա անհանգ ոտա-
նավոր: Օրինակներով լիքն է ամբողջ գիրքը:
Իբրև նմուշ բերենք նրա բաների վերնագրե-
ր և հենց առաջին բանի սկզբի բառերը. —
«Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՝ ողբոց
աղաղակի քեզ վերբնծայեմ, տեսողդ դադա-
նեաց. և մատուցեալ եղեալ ի հուր թախ-
ծութեան անձին տոշորման՝ զպտուղ ըղձից
ճննճերոյ սասանեալ մտացս բուրվաւաւ
կամացս առաքել առ քեզ: Այլ հոտոտեսցիս,
հայեսցիս, գթած, քան ի պատարազն բոլո-
րապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան»:
Այս հնգոտնյան չափավոր խոսքը հատուկ
է Նարեկացուն և կազմում է նրա՝ գրվածքի
խիստ զգալի մասը: Բայց նա ունի ավելի
բարդ չափեր. այսպես՝ մի տողը բաղկացած

երկու մասից, որոնցից առաջինը հինգ-վեց վանկանի, իսկ երկրորդը՝ յոթ. վանկանի, Այսպես է նրա մաքուր ժիւ բանը. — «Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հօգօ, զդառնացողիս դադաչանս, մատիւր գործեանքս առ պատկանեալս դիմօք. փարատեա, ամենապարզեւ, զամօթական տխրութիւնս...» և այլն. և այսպես մինչև վերջը: Ունի նաև ուրիշ բարդ շափեր, ինչպես 3-4—3-4 և այլն:

Բայց նարեկն ունի նաև հանգաւոր ոտանավոր, որ առաջին քայլն է մեր հին գրականութեան մեջ: Նա փորձ է արել մի ոտանավոր գրել «ի» հանգով, որ նա կոչում է այլաբանորեն «անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի», որ սկսում է այսպես. —

«Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝
ճեպով մեծաւ ի տուփի,
Ես ապիկար մատնեալ անարժան

գործովքս յիրաւի,
Վատնիշ արքունի զանձուց կրկնադատ
և անթափելի

Պատասխանատու մեծին ըմբռնեալ
անհրաժարելի,

Ի՛նչ քանքարոյ խնդիր՝ ես շունիմ կշիւ
մի ունկի» և այլն. (բան ԻԶ):

Նույնպես պատահում են կարճ հանգաւոր խոսքեր. օրինակ՝ «...ձիւ խոսնական կարծեքերաւս սանձակոտոր, արձակեցասան, յովանակն անհամբողջ վայրենական և անկիրթական, երինջս անողական անողական և անվարժական: Մարդս մոլեգնական անարագական և կորստական...» և այլն (բան ԻԲ): Ունի նաև տողեր, որոնք միևնույն բառով են սկսվում, այսինքն հանգն սկզբից ունեն, օրինակ. —

«Մեղայ երախտեացդ մոռացութեան
վերստին մեղայ,

Մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝
յիմարս մեղայ,

Մեղայ առ կեանսդ դժոխութեան, իսկ
և իսկ մեղայ,

Մեղայ բանիդ ապախտ առնելոյ՝
շարաշար մեղայ» և այլն (բան ԻԷ):

Ինչպես ասացի, հանգաւոր կամ անհանգ չափավոր խոսքը նարեկացին է առաջինը միտքերէ մեր գրականութեան մեջ, մինչդեռ ճիշտ նրա ժամանակակից Ֆիրդուսին արաբերենի նմանութեամբ կատարելագործել է ոտանավորը և հանգերի առատ գործածութեամբ ստեղծել յուր հոյակապ Շահնամն քերթվածը: Իսկ մեր գրականութեան մեջ հանգաւոր ոտանավորը սովորական դառնալու համար նարեկացուց հետո հարկավոր եղավ մոտ 150 տարի, մինչև ներսես Շնորհալին, որն իսկա-

պես հիմնադրեւ եղավ մեր հանգաւոր ոտանավորին իր բազմատեսակ ձևերով. այդ ձևերն մինչև այսօր էլ գործածական են և հազիվ այժմ փորձեր են արվում հատ-հատ շեշտային տաղաչափութիւններ գրելու եկրոպական (գերմանական, ռուսական) տարադի: Այս փորձերը սկսել են Տերյան, Հ. Համբարձումյան և վերջերս Ն. Զարյան՝ յուր «Արա Գեղեցիկ» քերթվածով:

Ներդաշնակութեան մի որոշ արտահայտութիւնը նարեկի մեջ կազմում է նմանաձայնութիւնը, այսինքն մի քանի միմյանց հաջորդող բառերի միևնույն գրով սկսվելը: Հեղինակը շատ է սիրում ներդաշնակութեան այս տեսակը: Հարյուրավոր օրինակներից բերենք մի քանիսը. «...տատանին տաղնապաւ տերեք տնկոց եղին ծառոց, շարժեալք ի հողմոց, ուժգին բախելոց...» (բան ԿԱ): «Փարատեա ի մտաց իմոց զմէք մթութեան մոռացութեան...» (բան ԼԴ): Մանավանդ գեղեցիկ է այս հատկութեան հաճախակի կրկնութիւնը «Որդի Աստուծոյ» բանի մեջ (ԽԱ), որտեղից բերում ենք մի քանի օրինակ. — «... ի ծագել անստուեր նշույց ողորմութեան քոյ փառաց՝ հալին մեղք, հալածին դեք... խղին կապանք, խորտակին շղթայք... տեղի տան տխրութիւնք... մեկնի մէզն, մերժի մառախուղն... զնայ գիշերն, տարագրի տաղնապն, չքանան շարիքն և այլն:

Նարեկի այս հատկութիւնները կազմում են նրա արտաքին մասը: Հեղինակը չուր այս քերթվածը նկատում է իբրև խունկ, որ յուր բոլոր թախծութեան հրով այրելով կամքի բուրվառով մատուցանում է Աստուծուն (բան Ա) և ցանկանում է, որ այս խունկը, այս կամավոր պատարագը ոչ միայն անուշահոտ լինի, այլ և արտաքուստ գեղեցիկ, ուստի և մեծ քանք է գործ դնում յուր քերթվածի արտաքին վայելչութեան համար: Սրանով հիրավի նրա խոսքը դառնում է ներդաշնակ, գրեթե երաժշտական նման, քայց միանգամայն և արժանատական, քանի որ հիշյալ հատկութիւնները ինքնաբոլոր չեն, այլ հետեանք են հեղինակի հաշվի, որոնումների:

Դառնանք այժմ նարեկի բովանդակութեանը, որը գլխավոր պատճառն է եղել նրա ժողովրդականութեան: Նարեկի մինչև այժմ եղած մեկնութիւնները, քննութիւնները, որքան ինձ հայտնի է, նրա ամեն մի գլուխը դիտում են իբրև առանձին բան, բանաստեղծութիւն, որոնք միմյանց հետ ոչ մի ներքին կապ չունին, և ամբողջ գիրքը մի հիմնական գաղափար չէ արտահայտում, այլ ամեն մի գլուխը մի անկախ, պատահական արտա-

հայտնություն է հեղինակի զգացումներին:

Սակայն այսպիսի ըմբռնողությունը սխալ է:

Մենք կտեսնենք, որ Նարեկի բոլոր գլուխները ներքին համերաշխ կապ ունեն իրար հետ և մի ընդհանուր գաղափար են արտահայտում:

Նարեկը սովորաբար կոչում են աղոթամատուց գիրք. սա սխալ որոշում է. արդարև նրա ամեն մի գլխում մարդը խոստովանում է իր մեղքերը. բայց սա չէ հեղինակի գլխավոր նպատակը, այլ մի ուրիշ բան. — նա մի դատ է, որ մարդը վարում է Աստծու հետ: Հենց առաջին բանում մարդն Աստուծո հետ խոսելիս ասում է նրան. «Այ երբ ես թեզ հետ դատ եմ սկսում, աղերսախառն դատ, ո՞վ հօր, մի՛ տաղտկանար նրանից, ինչպէս ամբարիշտ Խորայէլացոց ձեռքի համբարձումից կամ Բաբելոնի անիրաւութիւնից, այլ հաճութեամբ ընդունիր, ինչպէս այն խնկի բուրմունքը Սելովի խորանում, որ Դավիթը նորոգեց գերութիւնից դարձած ուխտի տապանակի հանդատեան համար»: Ահա այս դատը, վերջին դատաստանն է, որ հեղինակը հաճախակի հիշում է յուր գրքում. (բան Ա, Դ, Ծ, Ը, ԺԹ, ԻԴ, ԻԷ, ԼԸ, ԼԹ, Խ, Մ, Կ, ԿԾ, ԿԶ, ՀԳ, ՀԹ, ՂԵ, և այլն):

Ի՞նչ դատ է սա:

Սրան պատասխանելու համար մենք պետք է երևակայությամբ թռչենք մոտ հազար տարի առաջ, ծանոթանանք այն ժամանակի հավատացյալ կրոնավոր մարդկանց հավատքի, հոգեկան ապրումների հետ:

Բոլոր կրոնները, որքան ինձ հայտնի է, ընդունում են, որ մարդիկ այս աշխարհային կյանքից հետո ունենալու են անդրաշխարհային կամ հանդերձյալ հավիտենական կյանք. այսպես են զրադաշտականությունը, բուդդայականությունը, հուճական, մուսլիսական կրոնները, մահմեդականությունը: Այսպես է և քրիստոնեությունը, որի մեջ հավիտենական կյանքը հավատի հանգանակի հիմնական կետերից մեկն է կազմում: Աշխարհի վերջից հետո լինելու է վերջին դատաստանը, որի դատավորն է ինքը Քրիստոսը: Նա քննելու է բոլոր մարդկանց գործերը և վճռելու է համապատասխան հատուցում. արդարներին ուղարկելու է երկնային արքայություն, անվախճան երանություն, իսկ մեղավորներին դեպի դժոխք, անվախճան տանջանքների կայան: Այս դատաստանի մի աղոտ օրինակը բերում է ինքը Քրիստոս (Մատթ. ԻԷ), որտեղ նկարագրում է, թե ինքը դժոխք («Ի հուրն անշէջ») ուղարկելու է այն մարդկանց, որոնք չեն կերակրել քաղցածներին, չեն զովացրել ծա-

րավներին, չեն այցելել հիվանդներին, բանտարկյալներին, այսինքն իրենց ընկերներին, և ընդհակառակը, յուր հոր արքայությունն է ուղարկելու նրանց, որոնք նույնպիսի պայմաններում օգնել են իրենց ընկերներին: Հենց հավատի հանգանակում, որ բոլոր քրիստոնեական եկեղեցիներն ընդունում են, ասված է. «Գալու է (Քրիստոս) նոյն մարմնով և հօր փառքով դատելու կենդանիներին և մեռածներին, որի թաղաւորութեանը վերջ չկա» և վերջում ավելացնում է. (Հաւատամք) «Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս»:

Այս խոր հավատի բնական հետևանքն այն է լինում, որ մարդիկ այս աշխարհի կյանքի վրա նայում էին իբրև մի վաղանցուկ, ունայն կյանքի վրա, որ Նարեկացին կոչում է «շովիտ վշտաց հեծութեան»: Այստեղ մարդ պետք է պատրաստվի իսկական հավիտենական կյանքի համար. այս «փուշ աշխարհի մի կարճժամանակեայ բան է, որից կախուած է ամեն մի մարդու անվերջ ապագան կամ յաւիտենական երանութիւնը կամ յաւիտենական տանջանքն ըստ իւրաքանչիւրի գործերի»: Սրանով կարելի է բացատրել այն զարմանալի երևույթը, որ քրիստոնեությունից առաջին դարերում հարյուր հազարավոր հավատացյալներ ուրախությամբ հանձն էին առնում մահ, որպեսզի հաստատ մնան իրենց հավատին: Նրանք հավատում էին, թե իրենց այս կարճատե աշխարհային կյանքին անմիջապես հաջորդելու է հավիտենական կյանքի երանությունը: Այս նույն միտքն է, որ արտահայտում է Նիդշեն ասելով. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»:

Հոգեկան խոր հավատի այս միջավայրում ապրում էր և Դրիգոր Նարեկացին, նա որ մանկությունից սնվել ու մեծացել էր կրոնական շրջանում, Ս. Գրքի և մեկնությունների ընթերցանությամբ, անդադար աղոթքների և սրտմաշուք մտածմունքների մեջ, որ ամեն օր գիտակցում էր այս աշխարհի ունայնությունը և փափագում էր, որ արժանի լինի հանդերձյալ կյանքի երանություն: Չնայելով յուր անարատ վարքին, աղոթքներին, ճգնություններին, նա շարունակ մտատանջության մեջ էր, թե ի՞նչ է իրեն սպասում վերջին դատաստանի օրը, կորո՞ւտ թե երջանկություն: Նա միշտ աշխատում էր օրինապահ լինել, կատարել Փրկչի բոլոր պատվերները, ներել թշնամիներին, բարիք անել իրեն ատողներին, ուղորմած լինել, բայց և այնպես նա միշտ մտատանջության մեջ էր, որ գուցե անգի-

տակցարար որևէ մեղք է գործել, դուք
մարմնավոր թուլությամբ գործած լինի այն-
պիսի հանցանք, որ պատճառ դառնա հավի-
տենական կորստի: Այս երկյուղը անհայտ
ապագայի նկատմամբ նրան տանջում էր

Մարմինը քաշում է նրան դեպի ներքև, դեպի
մեղքը: Հոգու և մարմնի այս հարատև կռիվը
տեղի է տվել գեղեցիկ նկարագրությունե-
րի մեր միջնադարյան գրականության մեջ:
Նրանք անհաշտ թշնամի են միմյանց. հո-



Գրիգոր Նարեկացի

շարունակ: Ինչի՞ց էր այդ երկյուղը, քանի
որ ինքը ըստ յուր հասկացողության օրի-
նապահ էր: Այդ երկյուղը նրանից էր, որ
ինքը մարդ էր, իսկ մարդն ի բնե մեղավոր է:

Մաքը, ըստ Գրիգորի և յուր ժամանա-
կակիցների հասկացողության, բաղկացած
էր երկու մասից — հոգուց և մարմնից: Հո-
գին անմահ է, մարմինը մահկանացու: Հո-
գին ձգտում է դեպի վեր, դեպի Աստուած:

գին ձգտում է արհամարհել աշխարհային
կյանքի վայելչությունները, սերը, բավակա-
նությունը, իսկ մարմինը քաշում է նրան
դեպի այս մեղսալից գայթակղությունները:
Եթե մեկը կամենար վերջ դնել մարմնի այս
գայթակղություններին, կամենար վերջ դնել
յուր կյանքին, նա կգործեր անբավելի ծանր
հանցանք. անձնասպանությունը այնպիսի
ծանր մեղք էր համարվում, որ եկեղեցին
նույնիսկ արգելում էր անձնասպանին թաղել

եկեղեցական օրենքով: Մենա էր ուրեմն ապրել ու տանջվել հոգու ու մարմնի այս հարատև կոխիների մեջ, աշխատել ճնշել հարատև կոխիների նրա համեստ պահանջ-մարմինը, նույնիսկ նրա համեստ պահանջ-ներն անտեսել, որպեսզի հոգին զվարթանա:

Մեղքը: Ահա այն զարհուրելի, անիծյալ շարիքը, որ կախված է ամեն մարդու վզից, որից մարդը ազատում չունի: Մեղքն ամեն ժամանակ հալածում է մարդուն, գիշեր ու ցերեկ, ամեն օր նա կարող է մարդուն թըշվառացնել: Մեղքը մի դամոկլյան սուր է, որ շարունակ սպառնում է ջախջախել մարդու հոգին և նրանից փրկություն չկա: Գրիգոր Նարեկացին սարսափահար է մեղքերի անհունությունից և ուժգնությունից. նրա ամեն մի բանը լի է մեղքերով, մեղքերի հանձնառությամբ: Նա համեմատում է մեղքերի քանակը ծովի ավազի հետ. բայց ավազն անծին է, մի ավազը մի ավազ էլ կմնա, իսկ մեղքի ամեն մի տեսակը լի է ծնունդներով. մի մեղքն առաջ է բերում ուրիշ շատ մեղքեր: Մեղքերի քանակն անհուն է. եթե կշեռքի մի թափում դնենք Մասիս սարը, իսկ մյուսում մեղքերը, սրանք կգերակշռեն, Մասիսը վեր կբարձրացնեն: Եթե ընդարձակ դաշտերը դառնան մագաղաթ, եղեգները գրիչ, ծովերը թանաք, էլի չեն կարող լրիվ արտահայտել մեղքերի քանակը: Մեղքը սեփականությունն է մարդու. մարդ ծնած օրից արդեն մեղավոր է աշխարհի մեղքով, երկու սեռի կենսակցությամբ՝ որդեծնության համար. սա սկզբնական մեղքն է, որից մարդն ազատվում է մկրտության միջոցով: Իսկ երբ մարդ խելահաս է դառնում, վրա են հասնում նոր ստացական մեղքեր, որոնցից հիմնավորներն են՝ հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, որկրամոլություն: Սրանցից ամեն մեկն բերում է իր հետ բաղմամբիվ մեղքեր: Ձ բանում Նարեկացին թվարկում է 50 տեսակ գլխավոր մեղքեր, ամեն մեկն իր ճյուղերով:

Սրանք բոլոր մարդկանց ապականության գլխավոր տարրերն են, որոնցից ամեն մեկը պարունակում է հազար հազարավոր և բյուր բյուրավոր մեղքեր, որոնց թիվը մարդը չի կարող հաշվել, այլ միայն Աստուած գիտե: Ով որ իրեն մարդ է ճանաչում, եթե անհավատ չէ, պետք է զգա մեղքերի այս ծանրությունը, որ ճնշում է մեր բնությունը: Մեղքի այս անհուն դարավոր ընկճումը հավատացյալ մարդու հոգին դարձրել էր մի տեսակ մղձավանջ, idee fixe և մարդը համոզված էր, թե մեղքերից փրկություն չկա:

Ստատեան: Բավական չէ որ ամեն մարդ պարտավորված է անհամար ստացական մեղքերով, սրանց վրա ավելանում է նաև մարդկային ազգի մշտական թշնամին, շար ոգին կամ սատանան, որ ամենատեսակ հնարներ գործ է դնում խեղճ մարդուն մոլորության մեջ ձգելու, ուղիղ ճանապարհից հանելու, որպեսզի վերջին դատաստանից հետո մեղավորների թիվն ավելանա, դժոխքի ավարն ավելի հարուստ լինի, քան երկնային արքայությունը: Ստատեան հավատացյալ քրիստոնյային ներկայանում էր իբրև Աստուծու հակառակորդ, շարի սկզբունքի ներկայացուցիչ: Այս հասկացողությունը այնքան է արմատացել հայ ժողովրդի մեջ, որ մինչև անգամ առած է դարձել: Երբ մեկը բարկություն րոպեին մոտենում է մի անխոհեմ բան անել, բացականչում է. «Ստատեան ասում է թե...». կամ եթե մեկը հետ է կանգնում մտածած շար գործից, ասում է. «Նահալթրեզ, շար սատանա», երբ մեկը մյուսին խանգարում է մի բան անելու, նրան ասում են. «Ի՞նչ ես ստատեան կտրել»: Այսպես ուրեմն մարդը պաշարված է ամեն տեսակ մեղքերով, սատանան էլ միշտ գրգռում է նրան դեպի շարը. կարող է մարդ, որքան էլ օրինապահ լինի, յուր վերաբերմամբ վրստահ լինել, թե վերջին դատաստանի օրը չի խառնվի մեղավորների ստվար խմբին, չի ուղարկվի հավիտենական դժոխքը:

Այստեղ կարող է մի հարց ծագել մեր մեջ: Մի՞թե Նարեկացին հիրավի այնքան մեղավոր է զգում իրեն, որ յուր մեղքերն անթվելի են. մի՞թե նա անկեղծ է, երբ ասում է. ոչ ոք ինձ նման մեղավոր, ոչ ոք հանցավոր. Աղամից սկսած մինչև այսօր հավաստված բոլոր մեղքերը ես գործել եմ (բան ՀԲ): Մի՞թե չափազանցություն չէ այս սուտ չէ: Ո՛չ, սուտ չէ: Որովհետև հեղինակը «ես» ասելով հասկանում է ոչ թե անհատապես իրեն, Նարեկա վանքի վանական Գրիգորին, այլ համայն մարդկությունը: Գ բանում նա հայտնում է, թե այս գիրքը գրում է բոլոր վիճակի ու աստիճանի մարդկանց անունից, բոլոր հասակների, արունների ու էգերի, մեծամեծների ու հասարակների, թագավորների ու հպատակների, քահանաների ու աշխարհականների, ընտրյալների և սոսկ մարդկանց համար. ոմանց համար իբրև աղաչական աղերս, մյուսների համար՝ որպեսզի նրանց բոլորի հայցվածքները ներկայացնեն Աստուծու գթությունը: Նույն միտքը հայտնում է նաև գրքի վերջում ևս մի անգամ, թե խոսում է համայն մարդկության

անուանից, Ապա ուրեմն ամենամեղ մարդը Նարեկի մեջ հանդիսանում է ոչ թե ինքը, Գրիգոր Նարեկացին, այլ ընդհանրապես մարդ արարածը. Աստծու հետ խոսում է նրա կողմից ստեղծված մեղավոր մարդը, որին հատուկ են գրքի մեջ հիշված բոլոր անթիվ մեղքերը, և ինքն էլ մեկն է այս մեղսալից մարդկանցից, իբրև մարդ։ Ուստի պետք է ասենք, որ երբ Նարեկացին անթիվ մեղքերի ենթակա է ներկայացնում մարդուն, նա չէ կեղծում, այլ խոսում է անկեղծ համոզմունքով։ Մահկանացու մարդը ենթակա է ամենատեսակ մեղքերի և Նարեկացին, ինչպես մարդ, նույնպես ենթակա է այդ մեղքերին, ուստի նա մարդկության անունից է հանդես գալիս Աստծու հետ խոսելու, մարդու դատը պաշտպանելու։

Այս հոգեմաշ մտքերը, կասկածները անդադար զբաղեցնում էին բարեպաշտ Գրիգորին. նա մտածում էր՝ Աստուած բարերար է, մարդու բարին է ցանկանում, մի՞թե նա ստեղծել է այնպիսի մի անհանդուրժելի ճակատագիր, որ մարդիկ, որքան էլ դիմադրեն, պետք է մեղքերի զոհ դառնան. մի՞թե բարերար Աստուածը այսքան չար է մարդու հանդեպ, մի՞թե չկա փրկության հույս։ Ահա այս տանջող մշտական խոհերի մեջ նրա հոգում կարծես փրկության մի լույս է ծագում. — դո՛ւնե՛լ այդ փրկության միջոցը։ Աստուած չէր կարող այդքան չարաշար լինել յուր ստեղծած մարդու նկատմամբ, քաղության հնար կա և հարկավոր է այդ հնարը գտնել։ Այս հնարը, մեղքերից փրկվելու միջոցը, կազմում է Նարեկի ներքին բովանդակության կարմիր թելը. մաշվող կամենում է արդարանալ, պաշտպանում է իրեն. սա է Նարեկի հիմնական միտքը, որով գլուխների մեջ ներքին կապ, համերաշխություն է ըստեղծվում։ Սա այն դատն է, որ մարդը վարում է Աստծու հետ ինքնապաշտպանության համար։ Դատն անհավասար է. մի կողմից Աստուած, Քրիստոս, որ ամենազուր է և ամենազեղ, մյուս կողմից անթիվ մեղքերի մեջ ընկղմված տկար մարդը։ Եվ մարդը, որքան կարելի է եզրակացնել Նարեկի փաստարկումներից, կարողանում է իրեն պաշտպանել և դատը տանել։ Եվ ահա ստեղծվում է մի հոյակապ անօրինակ մտահղացում Գրիգոր Նարեկացու մեջ, մի գրական դործ, որի նմանը չկա մարդկության գրականության մեջ։

ԶԳ բանում հեղինակն ասում է. «Ողորմիր Տէր, մահացու մեղաւորիս իմ, վերջին դատաստանի ժամանակ, երբ կարկամած աչքերս դէպի վեր եմ բարձրացնելու՝ անխու-

սափելի մահը երեակայելով, երբ դէմքս ալլալւում է, մատներս տատանւում, կարկամ հառաչանքներ եմ արձակում, ձայնս խզւում է հեծեծանքի նաղ հառաչանքներով, երբ ես ընկած եմ լինում իբրև անկենդան դի, խօսելու կարողութիւնից զրկւած, ձեռներս կաշկանդւած, անդամներս քայքայւած, շրթունքներս փակ, մարմինս իբրև մի անշարժ տախտակ, մի անխօս ողորմելի տեսարան։ Ինչ որ այն ժամանակ չպիտի կարողանամ ասել, այսօր եմ ասում, որն ընդունիր մարդասիրաբար, ո՛վ երկայնամիտ ամենակեցոյց Տէր»։

Ուրեմն ինչ որ Նարեկի մեջ ասվում է, դա ամեն մի մարդու վերջին խնդրանքն է, զերեզմանի առաջ կանգնած մարդու, որով դիմում է Քրիստոսի գթությանը վերջին դատաստանի օրվա համար։

Այս ահեղ դատաստանի, որտեղ վճիռ պիտի կայանա ամեն մի մարդու հավիտենական կյանքի համար, մեկին զեպի անվախճան երանություն, մյուսին զեպի անվերջ տանջանքներ, դատավորը Քրիստոսն է. բայց նա ոչ միայն դատավոր է, այլև դատախազ, մեղադրող, և որքան մարդ հուսա, թե իրեն արդարացնում է, այնուամենայնիվ վերջին խոսքը դատավոր-դատախազին է. նա անձնիշխան է դատապարտելու կամ արդարացնելու։ Այս պատճառով Նարեկացին իր դատը կոչում է «խառնեալ աղերսիւ», աղերսախառն դատ, որովհետև հեղինակի համոզմամբ առանց Քրիստոսի գթության չէ կարելի արդարանալ, պետք է նրա գթության ապավինել։ Դատավորը՝ Քրիստոս, ամենազեղ է. նա գիտե ոչ միայն մեր դործերը, այլև մեր խոսքերը, այլև խորհուրդները. նրանից ոչինչ ոչ մի տեղ չէ կարելի թաքցնել։ Նա ամենակարող է. նա մի շնչով կարող է ոչնչացնել մեր բոլոր լեռնանման մեղքերը, նա ողորմած է ու ամենազուրկ, բայց և արդար ու վրեժխնդիր։ Նրա աչքի առաջ կանգնել է թույլ, մեղավոր մարդը, որ աշխատում է իրեն արդարացնել։ Այս դատաստանն էլ ունի յուր օրենսդիրը, որի հիման վրա մարդը արդարանում է կամ դատապարտվում։ Այդ օրենսդիրը Ս. Գիրքն է, որ գրված է Աստծու շնչով և իրեն Քրիստոսի խոսքերն են, որոնցից նա չէ կարող հրաժարվել։

Տեսնենք ինչպես է մարդն իրեն արդարացնում վերջին դատաստանի առաջ։

Նարեկի գրեթե ամեն գլխում մեղավոր մարդը բարդում է յուր վրա ամենատեսակ մեղքեր. թաղցնելը միտք չունի, որովհետև Քրիստոս դատավորն ամենազեղ է և ամեն-

նատես. Ընդհակառակը, մարդն ավելի է խտացնում յուր մեղքերը, որովհետև հավա-
տացած է, թե որքան ավելի լինեն զղջացող
մեղավորի մեղքերը, այնքան նա ավելի կսի-
րե Բրիստոսին (ակնարկություն Մարկ. 41—
44—66. Տե՛րը, որին ավելի շատ ներեց, նա
այնքան ավելի շատ կսիրե նրան):

Այս անշափ մեղքերի հանձնառությամբ
հանդերձ մարդը դիմում է Աստծուն. նա
ասում է. «Ձե՛ր որ ես քո ստեղծածն եմ, դու
ես ինձ աշակերտ ստեղծեց, ես այն եմ, ինչ
որ պիտի լինէի: Իայց դու ասացիր. հայրս
չէ կամենում, որ ես այս փոքրերից մէկին
կորցնեմ, և ես նրանց կպահեմ: Ո՛ր մարդը
չէ մեղանշել և զղջալով թողութիւն չէ գտել:
Դաւիթ մարգարէն, որ կանանոց ունէր
բազմաթիւ հարճերով, բայց էլի ցանկացաւ
մի գեղեցիկ կնոջ՝ Բերսաբէին, որի ամուսի-
նը՝ Ուրիա քետացին պատերազմի դաշտումն
էր և բերել տեց իր մօտ: Երբ կինը յղա-
ցաւ, Դաւիթը կամեցաւ իւր յանցանքը թազ-
ցնել. Յովաբ զօրավարին հրամայեց, որ
Ուրիային իր մօտ ուղարկէ: Ուրիան եկաւ
նամակով: Դաւիթը նրան հրամայեց, որ
տուն գնալ, հանգստանալ. բայց Ուրիան
տուն չգնաց, Դաւիթի պալատի առաջ քնեց:
Դաւիթը հարցրեց.— Ինչո՞ւ տուն չգնացիր:
Ուրիան պատասխանեց.— Ամբողջ Իսրայէլը
պատերազմի դաշտումն է, Ուստի տապա-
նակը ճակատումն է, ինչպէ՛ս կարող էր ծա-
ռաղ տուն գնալ, կնոջ հետ պառկել: Այն
ժամանակ Դաւիթը նրան էլի ետ ուղարկեց
և զօրավար Յովաբին պատվէր տեց, որ
Ուրիային վտանգաւոր տեղ կանգնեցնէ,
որպէսզի թշնամուց սպանի: Այդպէս էլ
եղաւ Այս մեղքը գործող Դաւիթը մեղաւ
եկաւ և փրկութիւն գտաւ Նրա որդին՝ Սո-
ղոմոնը, որ ունէր աշխարհային ամեն բա-
րութիւնները, որ տաճար շինեց Աստուծոյ
համար, վերջը մոլորեց, մոռացաւ Աստ-
ծուն, կուռքեր շինեց ու պաշտեց, և էլի
փրկութիւն գտաւ: Մանասէ թագաւորը, որ
մարգարէին սղոցով կէս արեց, կուռքեր
պաշտեց, բայց դառն զղջումով փրկութիւն
գտաւ Պետրոս առաքեալը, որ քո մատնու-
թեան գիշերը երեք անգամ քեզ ուրացաւ,
բայց զղջաց, լացեց և թողութեան արժանա-
ցաւ: Արդ ես էլ այս մեղաւորների նման
զղջում եմ մեղքերս, հաղորդվում եմ քո քա-
ւիչ մարմնով ու արիւնով. իսկ հաղորդու-
թիւնը քեզ համար աւելի ընդունելի է, քան
նահատակութիւնը, ուրեմն ես էլ պիտի
արժանանամ թողութեան»:

Հիշում է հարյուրապետին, քանանուհի

կնոջ, որոնք հավատի պատճառով բռնկու-
թիւն գտան իրենց որդոց համար: «Արդ ես
հաւատում եմ իմ ամբողջ հոգու կարողու-
թեամբ, ես էլ հոյս ունեմ քաւութեան: Դու
պատկերեցիր, որ մարդ պէտք է օրական
70×7 անգամ ներէ ընկերոց սխալները: Ես որ
անդադար զղջում եմ, մի՞թէ չպիտի գտնեմ
ներումն: Դու պատկերեցիր սիրել թշնամիներ-
ին, բարիք անել մեզ ատողներին, մի՞թէ
ինձ պէտք է ատես և արհամարհես, ես որ
քո մշտական երկրպագուն եմ: Դու բարեխո-
սեցիր այն հրէաների համար, որոնք քո
ձեռներն ու ոտները բռնում էին խաչի
վրա. «Հա՛յր, թո՛ղ ղոցա, զի ոչ գիտեն զինչ
գործեն»։ մի՞թէ ինձ, որ սիրում եմ քեզ,
երկրպագում եմ քեզ, պէտք է դէպի տան-
ջանքն ուղարկել: Դու որ ինձ համար արիւն
թափեցիր, մի՞թէ իզուր պիտի անցնի քո
սուրբ արիւնը ինձ նման մեղաւոր ու զղջա-
ցող արարածների համար: Մի՞թէ քո խաչի
հաւաւոր զօրութիւնը պէտք է աւելի թոյլ լինի,
քան սատանայի որոգայթները: Դու անշափ
բարի ես ու ողորմած, դու չես կամենում
մեղաւորի մահը, այլ նրա դառնալը շար
ճանապարհից և ապրելը: Դու գթացիր
անառակ կնոջը, դու գթացիր անառակ որ-
դուն, որ զղջաց. դու նոյն գթածն ես, մի՞թէ
քո մէջ արդարութիւնը, վրէժխնդրութիւնը
պէտք է աւելի գերակշիռ լինեն քան քո
աստուածային գթութիւնը, որի համար մարդ-
կային բոլոր մեղքերը փոշի են, որ մի շնչով
կարող ես ոչնչացնել: Ես լի եմ հաւատով, լի
եմ յուսով, ես քո անբաւ գթութեան եմ ա-
պաւինում, քաւի մեղքերս»:

Բացի անմիջապէս Բրիստոսին դիմելուց
Նարեկացին դիմում է և Ս. Աստուածածնին.
որ նրա համար գերմարդկային էակ է:
Հայկական գրականութեան ստեղծած անհա-
մեմատ սքանչելի մաղունայի համար, որը
մի անգամ երևացել էր նրան աստուա-
ծային մանուկը ձեռքին, հատուկ ներբող
ունի նա գրած: Նարեկացին նրան պաղատում,
խնդրում է բարեխոս լինել յուր միածին
որդու առաջ. «Քո արտասուքներով,— ասում
է,— օգնիր վտանգուածիս, օրհնեալ ի կա-
նայս, իմ հաշտութեան համար ծունկ չոգի-
ծնողդ Աստծու, նախ իմ թշաուիս համար
հոգա բարձրեալի խորանդ... Քո կուսական
կաթի մի կաթիլը անձրեկի իմ վրայ, որ
ինձ կեանք բերէ, ո՛վ մայրդ Յիսուսին»
(բան 2): Վերջը Նարեկացին դիմում է պա-
հապան հրեշտակի, մարգարեների, առա-
քյալների, սրբերի բարեխոսութեան, և հույ-
սին, անվերջ հուսին:

Թվում է թե Դրիգորը համոզվել է յուր

գրքի վերջում, թե յուր մատչանքն ընդունելի է Քրիստոսին, որ մեղավոր մարդու ինքնադարացումը համոզել է եղել նրան, որ մարդը արժանանում է փրկության: Այս համոզումը նա դուրս է բերել այն հանգամանքից, որ մարդու ինքնապաշտպանության փաստերը հիմնված են նույն դատավոր Քրիստոսի քարոզների անհուն սիրո, ներողամտության, մարդասիրության վրա, և Քրիստոս չէ կարող մերժել յուր այս գթության և ողորմության պատվերները: Նրա այս համոզումը ույժ էր առնում դեռ նրան կենդանի ժամանակ ցույց տրված ընդհանուր կարծիքից: Նա ինքն ասում է երկու տեղ (բան Իէ և 2Գ), թե իրեն կոչում էին լույս, ջահ փառաց, հրջանիկ, սուրբ, արդար, մարգարե, թեպետ համեստությամբ ինքը հրաժարվում էր այս մակդիրներից, ասելով թե անարժան է նրանց: Սակայն իրողությունն արտասովոր էր, որ կենդանի մարդուն պատվում էին այսպիսի մակդիրներով և Գրիգոր Նարեկացին յուր անարատ ու սուրբ վարքով իրավամբ արժանացել էր նման գովեստներին, որ և արտահայտվել է նաև բազմաթիվ հրաշալի ավանդություններով նրա կյանքի մասին:

Այս հանգամանքը, այսինքն Աղոթմատույցի ընդունելի լինելը, հեղինակին համարձակություն է տվել զանազան մաղթանքներ անելու յուր գիրքը կարդացողների համար: «Ով որ կարդայ,— ասում է նա,— այս աղաչանքի աղօթքները մաքուր սրտով, ծեր թէ տղայ, կոյս կամ երիտասարդ կամ աղախին, եթէ աստուածասիրաբար տառապի, թող զեզանից ընդունի ազատութեան երանութեան մասը, նոր մաքրութեան անարատութեան հասնելով» (բան Դ): Մի ուրիշ տեղ խնդրում է. «Ընդունիր իմ աղիողորմ հեծեծանքի այս հիսուածք և կատարիր այս անարին զոհի, այս խոսքի նւերը, երկնքի թագաւոր, օրհնիր և սրբիր այս ողբերգութեան տառը և դրոշմիր իբրև յաւիտենական արձան ըզդ հաճոյական պաշտամունքների մէջ. թող սա քո առաջ մշտնջենաւոր մնայ, թող արտասանուի քո ընտրեալների բերանով և երբ ես վախճանիմ իբր մահականացու, այս գրածքի մշտականութեամբ թող կենդանի համարվիմ... Թող այս գիրքը իմ ձայնով, իմ փոխարէն աղաղակէ, բաց անէ գաղտնիքները»: Հենց յուր գրքի սկզբում (բան Գ) երբ գրում է, թե խոսում է բոլոր կարգի ու աստիճանի մարդկանց անունից, նա մաղթանքներ է անում. «Ով որ այս գիրքը կարդում է յստակ սրտով, նրան շնորհիր հոգու բժշկութիւն և յանցանքների

մաքրութիւն, պարտքերի թողութիւն և մեղքի կապանքներից արձակում... Այս ողբերգութիւնը ճաշակողի համար քո յոյսի շնորհը մտնի նրա մէջ ու բնակի. եթէ անձնական ցաւերի, մահաւան վտանգը մէկին պաշարէ՝ թող սրանով փրկութիւն գտնէ կեանքի յուսով ըզդ աղօթելով, ո՛վ կեցուցիւ... Եթէ, դիւային ջերմի սարսուռը, զոլը մէկին խռովէ, թող նա սթափուի սրան խոստովանելով և խաչի խորհրդին երկրպագելով: Դու այս մատենանր դարձնես կեանքի զեղ քո ստեղծածների հոգիների և մարմինների համար... Ինձ այստեղ հետաքրքրեց ռարսուռ դիւային ջերման» խոսքը: Ինչո՞ւ է Նարեկացին ջերմը կոչում դիւային. արդյոք սա նրա բանաստեղծական երևակայության արդունքն է, թէ՞ ուրիշ հիմք ունի: Նույն այս արտահայտությունը գրքում գտնվում է ուրիշ երկու անգամ ևս: Ի՞նչ բանում Նարեկացին խնդրում է. «...սաստեա տաքնապող և դիւական տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց, զի փախիցէ ի մարդոյս...»: Նույնպես (բան Խ) գրում է. «Բժշկեա՛ զհրատապ ջերմնական տոշորումն մղձկեալ սրտիս, մերժեա՛ զդիւային շարահնարութեանս շշուկ քո պարտաւորիս...»: Ուրեմն դիւային կամ դիվական ջերմ խոսքը Նարեկացու ժամանակակից հայ ժողովուրդը գործ է ածել ջերմի մի տեսակին դիվային ծագում տալով: Բժշկական տեսակետից հետաքրքրական է, թե ինչո՞ւ հայ ժողովուրդը դիվային ծագում է տվել այս ջերմին: Քննելով այս հարցը ես եկա անսպասելի եզրակացության: Դե բառը սկզբնապես նշանակում էր շար ոգի, կամ ինչպես այլապես ասվում է՝ այս պիղծ: Իսկ ոգի բառը նշանակում է հոգի, շունչ, քամի: Ուրեմն դե սկզբնապես նշանակել է շար շունչ, շար օդ, իսկ դիվական ջերմը՝ ջերմի այն տեսակն է եղել, որ առաջանալիս է եղել շար օդից: Այս ջերմը ռուսերեն կոչվում է болотная лихорадка, ֆրանսերեն էլ նույն նշանակությամբ fièvre paludéenne իսկ իտալերեն կոչվում է mala aria որ բառացի նշանակում է վատ օդ: Այնպես որ թե իտալացիները, չգիտեմ որ դարից, և թե հայերը 10-րդ դարում նույն անունով հավասարապես կոչում էին ջերմի մի տեսակը, ճահճային ջերմը, որ առաջանում է վատ օդից այնպիսի տեղերում, որտեղ ձահիճներում առաջանում են որոշ տեսակի բացիլլներ և վարակում են մարդուն: Ես նայեցի մեր հետադա բժշկական գրականությունը: Մխիթար Հերացին ջերմի բազմաթիվ տեսակների մեջ հիշում է (Գլ. Ե) մի ջերմ, «որ ի տաք արևէ լինի կամ ի սամում օդէ և ի

տաք տեղեաց»։ նույնպիսի մի ջերմ «որ լինի զկնի մահտարածամիւն», այսինքն վարակիչ հիվանդութիւններից հետո, որ դարձյալ հետեանք է միկրոբների (Գլ. ԺԹ)։ Ամիր Դով-լաթը նույնպէս հիշում է (Գլ. ՄԸ) ջերմի մի տեսակ, որ առաջ է գալիս «խիստ տաք օդէ»։ Սրան համապատասխան է ուսերեն поветрие (ветер բառից), որ նույն նշանակութիւնն ունի։

Եւ աշխատեցի համառոտ կերպով ուրվագծել այն կրոնա-բարոյական մթնոլորտը, որի մեջ մեզանից հազար տարի առաջ ապրում էին մեր կրոնավոր հավատացյալ նախնիները, այն միստիկական մթնոլորտը, որ կարող էր ծնունդ տալ Նարեկի նման քերթվածին։ Այդ մթնոլորտը հատուկ էր նաեւ ոչ միայն կրոնավոր մարդկանց, այլ և աշխարհականներին, որոնք շարունակ լսում կամ կարդում էին նման աշխարհայացքի քարոզներ, և շարունակվեց պահպանվել այնուհետեւ երկար ժամանակ, թեպետ ավելի մեղմ կերպով։ Նարեկը, լինելով այս միստիկական մթնոլորտի ծնունդ, ինքն էլ իր կողմից ընթերցողներին ստվար խմբի մեջ շարունակեց և արծարծեց նույն աշխարհայացքը։ Սրանից է այն մեծ հավատը, որ ժողովուրդը տածում էր դեպի Նարեկը, իբրեւ մի սուրբ գրքի։ Նրա հեղինակը, ինչպէս տեսանք, դեռ կենդանութեան ժամանակ ճանաչված էր իբրեւ արդար, սուրբ մարդ և այս համբավն այնուհետեւ ավելի ևս տարածվեց։ Երևան եկան զանազան հորաշքներ, որ կատարել է Գրիգոր Նարեկացին, նույնիսկ նրա գերեզմանը։ Այստեղից արդեն մի քայլ է դեպի այն հավատը, թե Նարեկի մեջ բերված մաղթանքները՝ որ այս գրքի կարդացողները հոգու և մարմնի փրկութիւն կգտնեն, հիվանդութիւնները կփարատվեն, շար ոգիները կհալածվեն և այլն—կարող են իրոք կատարվել։ Եթե հեղինակը սուրբ մարդ է, Աստծուն հաճելի,— մտածում էր ժողովուրդը,— ուրեմն նրա խնդր-

վածքներն էլ Աստծուն ընդունելի կլինեն և նրա մաղթանքները կկատարվին։ Այս է պատճառը Նարեկի մեծ ժողովրդականութեան և իբրեւ բժշկական պիրք ճանաչվելուն։ Այս հավատը դեռ կենդանի էր մեզանից մոտ հարյուր տարի առաջ և գուցե հիմա էլ տեղ-տեղ շարունակվում է խուլ անկյուններում։

Բայց Նարեկ գրքով չէ սահմանափակվում Գրիգոր Նարեկացու գրական վաստակը։ սա նրա ստեղծագործութեան մի մասն է միայն, ինչպէս նախնի մեջ պտղի մի փեղկը։ Նա ունի ուրիշ շատ գրվածքներ. նա գրել է Սողոմոնի երգ-երգոցի մեկնութիւնը, ճառեր ու ներբողներ խաչի, Աստուածածնի, առաքյալների, Հակոբ Մօքնա հայրապետի մասին։ Մանավանդ նշանավոր են նրա տաղերն ու պանծերը, որոնք բանաստեղծութեան գոհարներ են, պոեզի գործոցներ։ Սրանք պահանջում են հատուկ, առանձին ուսումնասիրութիւն։

Թիմայի կողմից Նարեկի հետ որոշ նմանութիւն ունի Նարեկացուց 300 տարի հետո ապրող իտալացի բանաստեղծ Դանտեի աշխարհահռչակ ռեասուածային կատակերգութիւնը—ը, բաղկացած երեք հատորից, որք են՝ Դիոխը, Քավարան և Երկնային արքայութիւն։ Բայց այս երկու քերթվածները անհամեմատելի են նրանով, որ Նարեկը գործ ունի մարդկային հոգու հետ դեռ այս աշխարհում, գերեզմանի առաջ, որ մտատանջութեան մեջ է, թե ի՞նչ է իրեն սպասում դատաստանի օրը, այնինչ Դանտեի մոտ հոգիները նկարագրվում են դատաստանից հետո, հանդերձյալ կյանքում. վերջին դատաստանը Դանտեի երեակայութեամբ կամ երազի մեջ, արդեն կատարված է, և բանաստեղծը տեսնում է դիոխքում կամ հաջորդ վիճակներում իրեն ծանոթ մարդկանց կամ պատմական անձեր, որոնց տեղավորում է այս կամ այն տեղն ըստ նրանց բարոյական, կրոնական կամ քաղաքական վարքի, յուր հեղինակի հասկացողութեամբ։

